Գյուղատնտեսություն

պարզեցված բյուջե 2025



Funded by the European Union

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ARMENIAN LAWYERS' ASSOCIATION

ECONOMIC DEVELOPMENT RESEARCH CENTER
EDRC

AGORA CENTRAL EUROPE

B4C Budgets for Citizens
Բյուջեներ քաղաքացիների համար

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

Հապավումներ

ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
հա	հեկտար
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
մլն	միլյոն
մլրդ	միլիարդ

Ընդհանուր ակնարկ

- «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով ՀՀ 2025թ-ի պետական բյուջեն եկամուտների գծով հաստատվել է 2,837.6 մլրդ դրամի, ծախսերի գծով՝ 3,441.6 մլրդ դրամի չափով: Պետական բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) սահմանվել է 604.0 մլրդ դրամի չափով:

- Գյուղատնտեսությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում ներկայցվում են գյուղատնտեսության ծրագրերով, որոնք համակարգվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

- Գյուղատնտեսության ոլորտին կուղղվի 42.7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 2.6 տոկոսով կամ 1.1 մլրդ դրամով:

- ՀՆԱ-ի նկատմամբ 2025թ-ին գյուղատնտեսոության ծրագրերի ծախսերի կշիռը կկազմի 0.39 տոկոս՝ 2020-2024թ-ի միջինում 0.30 տոկոսի պայմաններում:

- Պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ գյուղատնտեսության ծախսերը կկազմեն 1.25 տոկոս՝ 2020-2024թթ-ի միջինում 1.1 տոկոսի պայմաններում:

- Գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման աճի միջին տեմպը 2020-2025թթ. կազմել է 39.2 տոկոս:

- Գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականությունը 2025թ-ին կիրականացվի թվով 5 բյուջետային ծրագրերի միջոցով:

- Ֆինանսավորման ծավալով գյուղատնտեսության ծրագրերի շարքում առաջատարը Գյուղատնտեսության արդիականացման ծրագիրն է: Այս ծրագրի ֆինանսավորումը կազմում է Գյուղատնտեսության բյուջեի 59.8 տոկոսը:

- Հաջորդում է Գյուղատնտեսության խթանման ծրագիրը ՝ 27.6 տոկոս կշռով:

Գյուղատնտեսության ծրագրերի բյուջեն





2025 թվականին պետական բյուջեից գյուղատնտեսական ծրագրերին կուղղվի 42.97 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 0.6 տոկոսով կամ 0.2 մլրդ դրամով:

2025 թվականին գյուղատնտեսության բյուջեն կկազմի պետական բյուջեի ընդամենը ծախսերի 1.25 տոկոսը՝ զիջելով 2024-ի մակարդակը 0.1 տոկոսային կետով:

Գյուղատնտեսության ֆինանսավորումն աճող է: 2020-2024 թվականների համար ֆինանսավորման ծավալների միջին տարեկան աճը կկազմի 39.2 տոկոս: Արդյունքում, 2019-ի գյուղատնտեսության ֆինանսավորման ծավալները կգերազանցվեն գրեթե 6 անգամ կամ 35.8մլրդ դրամով:

Գյուղատնտեսության ոլորտի բյուջետային ծրագրեր

Ծրագրի անվանում	Դասիչ	2024թ մլն դրամ	2025թ մլն դրամ	2025 տոկոս	2024/2025
Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	1187	23,534.5	25.685.3	59.8	+8,8%
Գյուղատնտեսության խթանման ծրագիր	1022	15,017.4	11,876.7	27.6	-26,4%
Անասնաբուժական ծառայություններ	1116	2,870.9	2,945.4	6.8	+2,5%
Գյուղատտեսական ենթակառուցքվածքների վերականգնում և զարգացում	1086	538.4	2,345.4	5.5	+77,0%
Բուսաբուծության խթանում և բույսերի պաշպանություն	1059	787.7	125.4	0.3	-528,3%
Ընդամնեը	-	42,748,9	42,978.2	100	+0.5%

Գյուղատնտեսության ոլորտի բյուջեի կառուցվածքն ըստ ծրագրերի



- Գյուղատնտեսության ոլորտի բյուջեի ամենամեծ ծրագիրը **Գյուղատնտեսության արդիականացման ծրագիրն** է, որին ուղղվում է ոլորտի ֆինանսավորման 59.8տոկոսը:

- Ըստ ֆինանսավորման հաջորդը՝ **Գյուղատնտեսության խթանման ծրագիրն** է, որը իրականացնելու համար նախատեսված է տրամադրել ոլորտի հատկացումների 27.6տոկոսը

- Մյուս երեք ծրագրերը միասին ապահովում են գյուղատնտեսության ոլորտի ծախսերի 12.6տոկոսը:

Գյուղատնտեսության ոլորտի աճի կառուցվածքը



1022 Գյուղատնտեսության խթանման ծրագիր
1059 Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն
1086 Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում
1116 Անասնաբուժական ծառայություններ
1134 Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն
1187 Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր

- Գյուղատնտեսության ծրագրերի բյուջեի աճը **2025** թ.-ին կկազմի **0.2** մլրդ դրամ:
- Գյուղատնտեսության ոլորտում ֆինանսավորման հիմնական փոփոխությունները կատարվել են Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի բյուջեում, որը աճել է **2.15** մլրդ դրամով, և Գյուղատնտեսության խթանման ծրագրում, որը նվազել է **3.1** մլրդ դրամով:
- Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում ծրագրի բյուջեն ևս էապես կաճի՝ **1.8** մլրդ դրամով կամ՝ **4.3** անգամ:
- Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրի բյուջեն նույնպես նվազել է **662.3** մլն դրամով:
- Անասնաբուժական ծառայություններ ծրագրի բյուջեն նույնպես աճել է՝ **74.5** մլն դրամ:

2025թ-ին ակնկալվող արդյունքային ցուցանիշներ

Ցուցահանդեսներին, համտեսներին, փորձի փոխանակումներին և այլ միջոցառումներին մասնակցող գինու գործարանների քանակ

40

Հայկական գինեգործության հանրահռչակմանը, հայկական գինիների առաջմղմանն ու արտահանմանն ուղղված միջոցառումներ ՀՀ տարածքից դուրս

2

Գինեգործների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ և խորհրդատվություններ, հատ

5

Անասնաբուժության, բուսաբուծության խթանման և բույսերի պաշտպանության ոլորտներում, գյուղատնտեսական նշանակության հողերի կոնսոլիդացման գծով կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների քանակը, հատ

5

Ապահովագրվող տարածքներ, հա

15000

ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորմանը աջակցության ծրագրի շրջանակում միավորված հողեր, հա

145

Հիմնվող փոքր խեցգետնաբուծական համալիրներ, հատ

3

Հիմնվող խոշոր խեցգետնաբուծական համալիրներ, հատ

1

100 հազար լիտրը գերազանցող մասի իրացման իրավունք ստացած կոնյակի սպիրտ, հազար բացարձակ լիտր

1000

Վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով հետազոտված տարածքներ, հա

18000

Կայուն բուսասանիտարական իրավիճակի ապահովում, տոկոս

90

Գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ տարվող պայքարի տարածք, հա

53000

2025թ-ին ակնկալվող արդյունքային ցուցանիշներ

Բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում, հազար տոննա

12

Բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացում և դաշտային փորձարկումներ, հատ

100

Կենդանիների հիվանդությունների ախտորոշման միջոցառումների քանակը

855061

Կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ (պատվաստումներ) միջոցառումների քանակը,

4241690

Կառուցվող ջերմոցների տարածք, հա

1.74

ՀՀ-ում այգեհիմնման նպատակով կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման ծրագրի շրջանակներում հիմնված նոր ինտենսիվ պտղատու այգիներ, հեկտար

500

Ոռոգման արդիական համակարգերով ներդրվող տարածքներ, հեկտար

100

2024-2025 թվականներին պետական աջակցությամբ ձեռքբերվող մեղվափեթակի քանակը (մեղվաընտանիքի հետ միասին)

7000

B4C Budgets for Citizens

Բյուջեներ քաղաքացիների համար

www.budgets.am